


ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ՅՈՅՍԵՐ



Հ. ԹՈՄԱՍ ՕՏԱՊԱՇԵԱՆ
(1886-1915)

Ահա ուրիշ կարմիր ծաղիկ մըն ալ, Տրապիզոնի հովիտէն, որ տակաւին նորաբաց կոկոն, թարմ ու կենսուրախ, խամրեցաւ տիրահռչակ մահով, իր երէց հոգեկից Հայերուն հետ Մխիթարեան վարժարանին:

Հազիւ 29 դարուններ էր բոլորած երիտասարդ վանականը, որ մեր աշխարհի հրաշալի բնութեամբ խանդավառ՝ նուիրուած էր Հայաստանի աշխարհադրութեան ուսումնասիրութեան, Հ. Ալիշանի օրինակին հետեւելով. եւ ահա ոսկի աշունը չունեցած, ինկաւ փոթորիկէն ու կարկուտէն սարսափելի կոտորածին:

Մկրտութեան անունով Քերոբէ, Հ. Թոմաս Օտապաշեան ծնած էր Տրապիզոն, 1886ի Յունուար 22ին. փոքր տարիքէն կ'ուղարկուի Ս. Ղազար (1899, Յունիս

22). Ուխտիս սքեմը կ'ընդունի 1903ի Ապրիլ 26ին եւ կը կոչուի Թոմաս:

Մխարանութեան անդամակցած է ուխտերով 1905ի Նոյեմբեր 12ին. իսկ կուսակրօն քահանայ ձեռնադրուած է 1911ի Յունիս 4ին, նոյնինքն Տրապիզոնցի Աբրահայր Գրպօ. Իգնատիոս Արքայսկ. Կիւրեղեանէ, հայադիտական եւ աստուածաբանական ուսումները լրացնելէ ետք:

Երիտասարդ նուիրեալը իսկոյն կը կոչուի ուսուցչական ասպարէզին եւ երկու տարի կը դասաւանդէ Հայաստանի աշխարհադրութեան՝ վանքի աշակերտներուն: Միաժամանակ կը պատրաստէ աշխարհադրական բազմաթիւ մը Հայաստանի:

1913ի վերջերը կը զրկուի Տրապիզոն, իր ծնողներու տեսութեան, եւ հոն կը պաշտօնավարէ՝ տեղւոյն Մխիթարեան վարժարանին մէջ:

Խոհական եւ համակրելի բնավորութեամբ, բարի առաջնորդն եղած է բազմաթիւ պատանիներու, որոնցմէ դժբախտաբար շատ քիչեր միայն աղատեցան կոտորածէն, եւ բոլորն ալ զեղեցիկ յիշատակներ պահած են իրմէ:

Ջարդերէն առաջ, սարսափի պահու մը, այրած է իր ձեռագիրը աշխատութիւնը, Հայապանի աշխարհադրական բազմաթիւ, հետը դոհելով նաեւ արցունքը իր վեճտարեկ սրտին:

Հ. Ստեփան Սարեանի հետ կալանաւորուած է եւ մասնակից է եղած Տրապիզոնի հայ կաթողիկէներու ձերբակալութեան, չարչարանքներուն եւ նահատակութեան:

Գրպօ. Նազլեանի Յուշերուն համաձայն (Ա. հտ. էջ 220), զինք տեսնողներ եղած են Տրապիզոնի մօտ, ձեւիկովիք դիւղը:

Խոստումնալից երիտասարդ մը Մխիթարեան Ընտանիքէն, որ ահա կ'իյնար

մեծ կազմերուն հետ, անհուն սուգի մէջ թաղելով թէ՛ Մխարանութիւնը, թէ՛ յոյսերը կապոյտ, երազները սրբամաքութիւնը:

Հանգիստ քու վաստակելի ոսկորներուդ եւ աճիւնիդ պատուական, սիրելի՛ Հ. Թոմաս. քու քահանայութեանդ չորրորդ տարեդարձին՝ բարձրացար նահատակութեան խորանը, երկնային պատարագիդ հանդէսը կատարելու, արիւնոտ պատմութեանդ, հրեշտակներուն հետ:

Քու անունդ ոսկի տառերով է քանդակուած Մխիթարեան Մխարանութեան արձանադրութեանց մէջ, եւ նահատակի դափնիներով պսակուած:

Յարգա՞նք քու յիշատակիդ:

Հ. Ն. Տ. Ն.

Հ. ՊՕՂՈՍ ԳԱՍՊԱՐԵԱՆ (1879-1915)

Մկրտութեան անունով Աբղիմեհ, Քրիստոսատուր, ամբողջ կեանքով իրականացուց այլ անուանակոչումը, որ իրեն համար կարծէք խորհրդանշիչ մըն էր, բնէն համար կարծէք խորհրդանշիչ մըն էր, բնէն համար կարծէք խորհրդանշիչ մըն էր, բնէն համար կարծէք խորհրդանշիչ մըն էր:

Հին քրիստոնեայ Մարտինի առոյգ դասակին էր Հ. Պօղոս Գասպարեան, ծնած 1879ի Նոյեմբեր 27ին: Ժամանակին՝ հայրիկն ալ, Յովհաննէս, Ս. Ղազարու դերեւանքին մէջ աշակերտած է. ո՛ր վերելքի մէջ կը խորհէր բարեպաշտ Մարտինի մահ: Տեղական ուսումները լրացնելէ ետք, արդէն քահանայի, կոչում կ'ունենայ նուիրուելու Մխիթարեան շարքերուն մէջ. Սուրբ Ղազար կը հասնի 1899ի Ռուս մէջ. Սուրբ Ղազար կը յառաջդիմէ զուրկներով, շուտով կը յառաջդիմէ հայկական ուսումներու մէջ. մասնաւոր ասակութիւն ցոյց կու տայ լեզուներու: Ս. Բեմառութիւնը տեղի կ'ունենայ 1901ի

Մայիս 5ին: Երկու տարի ետք, 1903ի Մայիս 10ին, ուխտերով կ'անդամակցի Մխարանութեան, իսկ 1906ին Յունիս 3ին կը բարձրանայ սուրբ խորան, քահանայական օծութեամբ ձոխացած:

Աշակերտութեան շրջանին, կը պատմեն իր դասընկերները (Հ. Ղեւոնդ Վ. Տալեան եւ Հ. Գարեգին Վ. Լազարեան) օժտուած բացառիկ յիշողութեամբ, կարող է եղած ամբողջ դիրք մը բերանացի սորվել շատ կարճ ժամանակի մէջ, հանդէսի մը ատեն արտասանելու համար. (Ս. Բեռնարդոսի ձառը, բնծայուած Տիրամօր): Աչքերու տկարութեան հետեւանքով եւ շուտով չլիթելու ենթակայ, ճաշարանի ընթերցումները կը պատրաստէր, կ'ըսեն, զրեթէ բերանացի, որպէսզի անխալ ընթանար ամէն ինչ:

Ձեռնադրութեանէն ետք տարի մը վանքին մէջ կը մնայ իբր դասատու: Իր բացառիկ կարողութիւնները զարգացնելու համար, Մխարանութիւնը զինք կը զրկէ Հռոմ, աստուածաբանութեան համալսարան, «Անճելիքում». երկամեայ շրջանի մը մէջ, 1908-1910, կը բոլորէ յաջողութեամբ, ու պսակաւոր կը վերադառնայ վանք, իր մէկ ուրիշ դասընկերով՝ Հ. Տիմոթէոս Վ. Տէր-Կիւրեանի հետ:

Վերադարձին, վանքին մէջ կը նուիրուի իր ուսումնական աշխատանքներուն, միա-



ժամանակ իբր օգնական Տպարանապետի՝
Կաշխատի այդ ուղղութեամբ:

1911ի սկիզբները կը ղրկուի Մարտին,
ծնողքին այցելութեան: Տեղւոյն թեմա-
կանին՝ Գրպծ. Մալոյեանի թախանձանք-
ներուն վրայ, Հ. Պօղոս Գառապարեան կը
մնայ Մարտին, կը կաղմակերպէ տեղւոյն
մէջ վարժարան մը: Շահած ամէնուն հա-
մակրանքը, իբր արթուն առաքեալ, նը-
ւերուած հոգիներու փրկութեան սուրբ
զործին, մեծ արդիւնք կ'ունենայ սակաւ
տարիներու ընթացքին: Գրպծ. Մալոյեա-
նի նամակը, զոր պիտի հրատարակենք
անմիջապէս ստորեւ, խօսուն վկայութիւն
մըն է իր անբասիր կեանքին ու նուիրու-
մին:

Աքսորակից, չարչարակից ու նահատա-

կակից Գրպծ. Մալոյեանի, ինչպէս կը
պատմէ Ասորի Իսահակ Վրդ. իր յուշե-
րուն մէջ, զոր թարգմանաբար ներկայա-
ցուցինք այս թիւին մէջ, ինքն ալ բաղմա-
հաղար ժողովուրդին հետ կը նահատակ-
ուի զնդակահար, մինչեւ վերջին շունչը
քաջալերելով իր հոգեւոր որդիները:

Հանդիստ բաղմաչարչար նահատակին,
հանդիստ անապատին մէջ ցրուած անոր
սուրբ ածիւններուն: Քրիստոսատուր՝ ոչ
միայն իր անունով ու վարքով, այլ նաեւ
իր կեանքի նուիրումով, հիմա ան երկնքի
մէջ յաւերժական փառքերը թող նուազէ
ամենակալ Արարչին, հրաւիրելով երկ-
նային բիւր օրհնութիւն Միաբանութեան
և համօրէն Արքիւս վրայ:

Հ. Ն. Տ. Ն.

ԳՐՊԾ. ԻԳՆ. ՄԱԼՈՅԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐԲԵՊԻՍԿՈՍԱՐԱՆ

ՄԱՐՏԻՆՈՒ (ՄԻՋԱԳԵՏՔ)

Մարտին, 12 Մայիս 1912

Արհիպատիւ Գերապայծառ Տէր
Տէր Իգնատիոս Վրդ. Կիւրեղեան
Աբբահայր Միսիթարեան Միաբանութեան
ի Վենետիկ

Ութ օր է թեմս հասնելուն, և իբր սրբազան պարտք կը համարիմ փու-
թալ յայտնել յանձն Ձեր Արհի. Տէրութեան, համայն Միսիթարեան արդիւ-
նաչառ սիրելի Միաբանութեան, իմ սրտազին շնորհակալիքս այն թանկագին
կամիջոցին, մատուց իր հայրենեաց և իմ թեմիս Գերջ. Գառապարեան Պօղոս
նալով ամէնուն և շահելով համայնից համակրանքը և սէրը, իր առաքելա-
ջան վաստակով և անխոնջ աշխատանքով՝ հոգւոց փրկութեան և ուղղափառ
կրօնիս պայծառութեան համար:

Քաջ գիտակ ըլլալովս արդէն սոյն առաքինադարդ Հօր վսեմ և կրօ-
նասէր սկզբանց, միշտ այդ գաղափարը տածած էի մտքիս մէջ՝ աղաչել Ձեր
Արհի. Տէրութիւնը որ թոյլ տայ իրեն մնալ իմ թեմիս մէջ, որ կարօտ է մե-
ծապէս այսպիսի բարի, ուշիմ և կարող անձանց:

Այն զի վառ բաղձանք ունենալով այս ընդարձակ և հայերու հոծ բաղ-
մութեամբ լի թեմիս մէջ կորսուած հայերէն լեզուն վերահաստատել, կու
զամ ներկայիս թախանձանք խնդրել Ձեր Արհի. Տէրութենէն, որ մեծագոյն
չնորհք մ'ալ բարեհաճի թեմիս՝ բանալով հոս Մուրատ-Ռափայէլեան վար-
ժարանի մասնաճիւղ մը, որ վերակենդանութեան պատճառ պիտի ըլլայ այս
թշուառ վիճակիս, ի պարծանս Միսիթարեան սիրելի Միաբանութեան, որ
Ազգիս մատուցած բաղմադիմի այդքան վսեմ ծառայութեանց շարքին մէջ պի-
տի դրաւէ նաեւ այս պարծանքը՝ կենդանացնելու Մարտինու նահանգին մէջ
մեր աղգային ցանկալի լեզուն:

Յայտմ մասին վստահ եղէք զտնալ յիս ամէն տեսակ կարելի բարի տրա-
մադրութիւններ, ինչպէս որ ես ալ կը յուսամ գիտնալ Ձեր կողմանէ՝ բաց-
ուելիք մասնաճիւղին պայմանները, եթէ ունիք:

Եւ ահա այս պատճառաւ է յաւէտ որ զրեա թէ բռնի կերպով յետաձգել
տուի Գերջ. Գառապարեան Հայր Պօղոս վարդապետին ճամբորդութիւնը, մա-
նաւանդ որ ներկայ քաղաքական խնդիրներուն բերմամբ՝ ճամբորդութիւնը
վտանգաւոր է, զի նոյն իսկ քաղքիս մէջ ընդհանուր ապահովութիւնը խան-
դարուած է, և ամէն գիշեր մէկ մէկ արկած կը հանդիպի. իսկ Տէրութիւնը
բնաւ ո'չ կը մտածէ և ոչ կը հոգայ: Արդ, եթէ քաղքիս մէջ այսպէս, ի՞նչ
ակնկալելու է դուրսը:

Յուսալով որ լուրջ նկատողութեան առնելով իմ կրկին աղաչանքս պի-
տի հաճիք օր առաջ ուրախացնել զիս նպատաւոր պատասխանեալ:
Կը կնքեմ զրութիւնս սրտազին շնորհակալութեան հաւատսօք կանխա-
պէս, և մնամ յարգալից մեծարանօք և սիրով

Արհի. Տէրութեանդ
յ. ծ.

ԻԳՆԱՏԻՈՍ Վ. ՄԱԼՈՅԵԱՆ
Արքեպիսկոպոս Կաթողիկէ Հայոց
Մամպոռ և Շրջակայից

(Դիւան Ս. Ղազարու, 1912)